


Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

 Վ. Կարապետյան

Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16.07.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.07.2014թ.-ի թիվ 59 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում 2014թ.-ի 2-րդ եռամսյակի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտոր՝ Ն.Կարապետյանի և ուսուցանվող աուդիտոր՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Ռ.Հայրապետյանը, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Ա.Սարգսյանը, գլխավոր մասնագետ՝ Կ.Սարգսյանը /գնումների համակարգող/, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Ա.Ղազարյանը, քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ՝ Գ.Ղազարյանը /պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ/:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ոին են բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը ունի ֆինանսական վերահսկողության փորձ և ներքին աուդիտորի որակավորում: Աշխատանքները ղեկավարում է ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը:

Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել օՐԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ օ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ գնումների գործընթացը իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին գնումների համապատասխանության աուդիտ:

Կրթության ոլորտ:

Հանրակրթական ուսուցում: Վայոց ձորի մարզպետարանի կողմից իրականացվել է 09-01-02-01,09-02-01-02,09-02-02-02 ծրագրերի շրջանակներում <<Հանրակրթական ուսուցման ծառայությունների>> գնում ԲԸԱՀ /բանակցային ընթացակարգ առանց հայտարարության/ ընթացակարգի կիրառմամբ, համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ի ենթակետի պահանջների: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 05.02.2014թ.-ի թիվ 9 հրամանի համաձայն ստեղծվել է <<Կրթության, մշակույթի և սպորտի>> ոլորտին հատկացված ծրագրերով ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ-01.48:

Հրավերը ուղարկվել է 48 հանրակրթական ՊՈԱԿ-ների: Հայտ են ներկայացրել բոլոր 48 ՊՈԱԿ-ները: Ներկայացված բոլոր հայտերը ընդունվել են: Գնումները կատարվել են 3 չափաբաժնով 1-ին չափաբաժին՝ 144270900 դրամ, 2-րդ չափաբաժին՝ 422597600 դրամ, 3-րդ չափաբաժին՝ 638982800 դրամ: Գնումների արդյունքում ըստ չափաբաժինների կնքվել է գնման պայմանագրեր 48 հանրակրթական ՊՈԱԿ-ների հետ, որի վերաբերյալ ներկայացվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարություն: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե:

Կատարողական աուդիտ: Առկա է ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցը, որի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Նախակրթարանային ուսուցում: Իրականացվել է 09-01-01-01 ծրագրի շրջանակներում «Նախադպրոցական կրթության ծառայությունների» գնում ԲԸԱՀ /բանակցային ընթացակարգ առանց հայտարարության/ ընթացակարգի կիրառմամբ, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ի ենթակետի պահանջների: Վայոց ձորի մարզպետի 08.02.2014թ.-ի թիվ 3 կարգադրության համաձայն ստեղծվել է «Կրթության, մշակույթի և սպորտի» ոլորտին հատկացված ծրագրերով ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ-51..63: Հրավերը ուղարկվել է 13 հանրակրթական ՊՈԱԿ-ների: Հայտ են ներկայացրել բոլոր 13 ՊՈԱԿ-ները: Ներկայացված բոլոր հայտերը ընդունվել են: Գնումները կատարվել են 13 չափաբաժնով ընդհանուր գումարով՝ 21066200 դրամ: Գնումների արդյունքում ըստ չափաբաժինների կնքվել է գնման պայմանագրեր 13 հանրակրթական ՊՈԱԿ-ների հետ, որի վերաբերյալ ներկայացվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարություն: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե:

Կատարողական աուդիտ: Առկա է ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցը, որի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Ներառական կրթություն: Իրականացվել է 09-02-01-04.05 ծրագրի շրջանակներում «Ներառական կրթության ծառայությունների» գնում ԲԸԱՀ /բանակցային ընթացակարգ առանց հայտարարության/ ընթացակարգի կիրառմամբ, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ի ենթակետի պահանջների: Վայոց ձորի մարզպետի 08.02.2014թ.-ի թիվ 3 կարգադրության համաձայն ստեղծվել է «Կրթության, մշակույթի և սպորտի» ոլորտին հատկացված ծրագրերով ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ-49..50: Հրավերը ուղարկվել է 2 հանրակրթական ՊՈԱԿ-ների: Հայտ են ներկայացրել բոլոր 2 ՊՈԱԿ-ները: Ներկայացված բոլոր հայտերը ընդունվել են: Գնումները կատարվել են 2 չափաբաժնով ընդհանուր գումարով՝ 31902400 դրամ: Գնումների արդյունքում ըստ չափաբաժինների կնքվել է գնման պայմանագրեր 2 հանրակրթական ՊՈԱԿ-ների հետ, որի վերաբերյալ ներկայացվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե:

Կատարողական աուդիտ: Առկա է ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցը, որի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների,

գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Արտադարձական դաստիարակություն: Իրականացվել է 09-05-01-05 ծրագրի շրջանակներում <<Արտադարձական կրթության ծառայությունների>> գնում **ԲԸԱԿ** /բանակցային ընթացակարգ առանց հայտարարության /ընթացակարգի կիրառմամբ, համաձայն <<Գնումների մասին>> << օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ի ենթակետի պահանջների: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 05.02.2014թ.-ի թիվ 9 հրամանի համաձայն ստեղծվել է <<Կրթության, մշակույթի և սպորտի>> ոլորտին հատկացված ծրագրերով ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ԲԸԱԿ ԾՁԲ-63: Հրավերը ուղարկվել է <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ին, որը ներկայացրել է համապատասխան հայտ: Ներկայացված հայտը ընդունվել է: Գնումները կատարվել են 1 չափաբաժնով ընդհանուր գումարով՝ 40058500 դրամ: Գնումների արդյունքում կնքվել է գնման պայմանագրեր, որի վերաբերյալ ներկահացվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ << պետական բյուջե:

Կատարողական աուդիտ: Առկա է ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցը, որի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանություն: Իրականացվել է 04-05-01-06 ծրագրի շրջանակներում <<Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանություն>> գնում ՇԸ /շրջանակային համաձայնագրի/ ընթացակարգի կիրառմամբ, համաձայն <<Գնումների մասին>> << օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2012թ.-ի թիվ 1616-Ն որոշումը: Վայոց ձորի մարզպետի 21.01.2013թ.-ի թիվ 10 կարգադրության համաձայն ստեղծվել է <<Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանություն>> ոլորտին հատկացված ծրագրով ծախսերի շրջանակներում աշխատանքների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ՊԱՇՁԲ-10/1-21 և ՎՁՄ ՊԱՇՁԲ-10/1-30: Գնումները կատարվել են 2 չափաբաժնով համապատասխանաբար 32711000 դրամ և 32711000 դրամ, ընդհանուր գումարով՝ 65422000 դրամ: Գնումների արդյունքում կնքվել են գնման պայմանագրեր Եղեգնաձորի ՃՇՇ ՓԲԸ-ի և Վայքի ՃՇՇ ՓԲԸ-ի հետ, որի վերաբերյալ ներկայացվել և հրապարակվել է կնքված պայմանագրերի մասին հայտարարություն <<Գնումների մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն: Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 25.12.2014թ.-ը ներառյալ: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ << պետական բյուջե:

Առկա են գնման ժամանակացույցերը, վճարման ժամանակացույցերը, տուժանքի պայմանագրերը:

Կատարողական աուդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի: Այն կրում է շարունակական բնույթ:

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսեր:

Ապրանքների ձեռք բերում /գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 25.02.2014թ.-ի թիվ

19/2, 12.03.2014թ.-ի թիվ 32, 17.03.2014թ.-ի թիվ 34 հրամաններով ստեղծվել է «Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսեր» ծրագրով նախատեսված ծախսերի շրջանակներում աշխատակազմի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում, ղեկավար՝ աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ՝ Գ.Ղազարյան, «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» ՎՁՄՇՀԱՊՁԲ-11/3 խումբ ապրանքների, համակարգչային և պատճենահանման սարքավորումներ ու օժանդակ նյութեր ՎՁՄՇՀԱՊՁԲ-11/8 խումբ ապրանքների ձեռք բերման /գնման/, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնումների համակարգող, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Ռ.Հայրապետյան տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/11 խումբ ապրանքների ձեռք բերման /գնման/ գնումների համակարգող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Ա.Սարգսյան, վառելիք ՎՁՄ ՇՀԱՊՁԲ-11/1-1 խումբ ապրանքների, ավտոպահեստամասերի ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/13 խումբ ապրանքների ձեռք բերման /գնման/ գնումների համակարգող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ.Սարգսյան,

Ավտոպահեստամասերի ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 28.02.2014թ.-ի թիվ 21 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի գ/ կետի և 18-րդ մասի պահանջների, ստեղծվել է ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/13 ծածկագրով ավտոպահեստամասերի ձեռք բերման /գնման/ գնահատող հանձնաժողով: Մրցույթի հաղթող է ճանաչվել «ՎԻՎԵԿԱ» ՍՊԸ-ն, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր «ՎԻՎԵԿԱ» ՍՊԸ-ի հետ 592000 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 01 հանձման-ընդունման արձանագրության պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 266200 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Համակարգչային և պատճենահանման ու օժանդակ նյութերի ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 17.03.2014թ.-ի թիվ 35 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի գ/ կետի և 18-րդ մասի պահանջների, ստեղծվել է ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/8 ծածկագրով համակարգչային և պատճենահանման ու օժանդակ նյութերի ձեռք բերման/գնման/ գնահատող հանձնաժողով: Մրցույթին մասնակցելու հրավեր է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 25.03.2014թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում մրցույթում հաղթող է ճանաչվել «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ն, որին առաջարկվել է կնքել պայմանագիր: Կնքվել է գնման պայմանագիր «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ի հետ 351900 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 01 հանձման-ընդունման արձանագրության պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 144160 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկա: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Ինտերնետային կապի ծառայությունների ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 10.12.2013թ.-ի թիվ 221 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի բ/ կետի ստեղծվել է ՎՁՄ ՇՀ ԾՁԲ-11/1-1 ծածկագրով Ինտերնետային կապի ծառայությունների ձեռք բերման/գնման պատասխանատու ստորաբաժանում և 10.12.2013թ.-ի թիվ 220 հրամանով համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի գ/ կետի և 18-րդ մասի պահանջների, ստեղծվել է ՎՁՄ ՇՀ ԾՁԲ-11/1-1 ծածկագրով Ինտերնետային կապի ծառայությունների ձեռք բերման /գնման/ գնահատող հանձնաժողով: Էլեկտրոնային եղանակով 11.12.2013թ.-ին գնման հրավեր է ուղարկվել բոլոր հնարավոր մասնակիցներին: Հայտ է նեկայացրել 1 մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 23.12.2013թ.-ին սահմանված ժամին կայացել է հանձնաժողովի նիստը: <<ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>> ՓԲԸ-ն ճանաչվել է մրցույթի հաղթող, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր <<ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>> ՓԲԸ-ի հետ 372000 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 01, 02, 03, 04 և 05 հանձման-ընդունման արձանագրությունների պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 136400 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Տնտեսական, սանհիգիենիկ և վազման միջոցների ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 22.01.2014թ.-ի թիվ 3 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 5-րդ բաժնի 29-րդ կետի պահանջների ստեղծվել է ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/11 գնահատող հանձնաժողով: Մրցույթին մասնակցելու հրավեր է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է նեկայացրել մեկ մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 24.02.2014թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում մրցութային հաղթող է ճանաչվել „Եղեգնաձորի սպիտակ տուն“ ԱԿ-ն, որին առաջարկվել է կնքել պայմանագիր 356660 դրամի չափով:

Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ

01 հանձման-ընդունման արձանագրության պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 65262 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկա: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռք բերում/գնում/:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 17.03.2014թ.-ի թիվ 34 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 5-րդ բաժնի 29-րդ կետի պահանջների ստեղծվել է ՎՁՄ ԲԸԱՀ ԾՁԲ-11/6 գնահատող հանձնաժողով: Մրցույթին մասնակցելու հրավեր է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 25.03.2014թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում մրցույթում հաղթող է ճանաչվել «ԱՅ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, որին առաջարկվել է կնքել պայմանագիր 279300 դրամի չափով:

Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 25.02.2014թ.-ի թիվ 19/1 և 19/2 հրամաններով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 5-րդ բաժնի 29-րդ կետի պահանջների ստեղծվել է ՎՁՄ ՇՀԱՊՁԲ-11/3 ծածկագրով գրենական պիտույքների և գրասենյակային նյութեր ձեռք բերման/գնման/ պատասխանատու ստորաբաժանում, համակարգող և գնահատող հանձնաժողով: Էլեկտրոնային եղանակով 07.03.2014թ.-ին գնման հրավեր է ուղարկվել բոլոր հնարավոր մասնակիցներին: Հայտ են ներկայացրել 2 մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 19.03.2014թ.-ին սահմանված ժամին կայացել է հանձնաժողովի նիստը: Մրցույթի հաղթող է ճանաչվել «Սմարթլայն» ՍՊԸ-ն, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր «Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ 606339 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 01, 02 հանձման-ընդունման արձանագրությունների պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 271347 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Բենզինի և քսայուղերի ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 10.12.2013թ.-ի թիվ 222 և 223 հրամաններով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 5-րդ բաժնի 29-րդ կետի պահանջների

ստեղծվել է ՎՁՄ ՇՀԱՊՁԲ-11/1-1 ծածկագրով բենզինի և քսայուղերի ձեռք բերման/գնման/ պատասխանատու ստորաբաժանում, համակարգող և գնահատող հանձնաժողով: Էլեկտրոնային եղանակով 11.12.2013թ.-ին գնման հրավեր է ուղարկվել բոլոր հնարավոր մասնակիցներին: Հայտ է ներկայացրել 1 մասնակից, որի ստացման վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում գրանցամատյանում: 23.12.2013թ.-ին սահմանված ժամին կայացել է հանձնաժողովի նիստը: Մրցույթի հաղթող է ճանաչվել <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի հետ 7014218 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 01, 02 հանձման-ընդունման արձանագրությունների պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 3155600 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 21.05.2014թ.-ի թիվ 67 և 68 հրամաններով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի ա/ և բ/ պարբերությունների և 29-րդ կետի պահանջների ստեղծվել է ՎՁՄ ՇՀՁԲ-11/13-2 ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման/գնման/ պատասխանատու ստորաբաժանում, համակարգող և գնահատող հանձնաժողով: Մրցույթի հաղթող է ճանաչվել <<ՎԻՎԵԿԱ>> ՍՊԸ-ն, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր <<ՎԻՎԵԿԱ>> ՍՊԸ-ի հետ 1323000 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 1 հանձման-ընդունման արձանագրության պարտավորությունները 2014թ. յոթ ամիսների ընթացքում իրականացվել է 298600 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի:

Լրատվամիջոցների (թերթերի) ծառայությունների ձեռք բերում/գնում/: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 09.01.2014թ.-ի թիվ 2 հրամանով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 13-րդ մասի 1-ին ենթակետի գ/ պարբերության և 18-րդ մասի պահանջների ստեղծվել է ՎՁՄ ԲԸԱՀ ԱՊՁԲ-11/20 ծածկագրով չհատվամիջոցների (թերթերի) ծառայությունների ձեռք բերման/գնման/ գնահատող հանձնաժողով: Մրցույթի հաղթող է ճանաչվել <<Պրես Ստենդ>> ՍՊԸ-ն, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Կնքվել է գնման պայմանագիր <<Պրես Ստենդ>> ՍՊԸ-ի հետ 103000 դրամի չափով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից:

Կատարողական առդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրի շրջանակներում համաձայն թիվ 1


հանձման-ընդունման արձանագրության պարտավորությունները 2014թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 34300 դրամի չափով: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Պայմանագրի գործողության ժամկետը 2014թ.-ի բյուջետային տարի: Եզրակացություն՝ Գնումները համապատասխանում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին:

Աուդիտորներ՝




Ն. Կարապետյան

Գնումների համակարգողներ՝



Լ. Ավետիսյան



Ռ. Հայրապետյան



Ա. Սարգսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ՝



Կ. Սարգսյան

Ա. Ղազարյան

Գ. Ղազարյան